ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

22.04.2019
342-01

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
նախարար Սուրեն Պապիկյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան,

2018 թ.-ի հուլիսի 30-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե արդյոք օրինական է հանրային կարևորություն ունեցող վայրում՝ Արագած լեռան ստորոտին իրականացնել մասնավոր պարսպապատում և արդյոք ունի Քարե լճի ափին տեղակայված ռեստորանային համալիրը տարածքը պարսպապատելու թույլտվություն:

2018 թվականի հոկտեմբերի 2-ին Արագածոտնի մարզի Ուշի համայնքի ղեկավար Ս. Սիմոնյանը պաշտոնական գրությամբ տեղեկացրել է, որ պարսպի որոշ հատված կառուցված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված հողամասերի ցանկում ներառված հողամասի վրա, ուստի հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները ինքնակամ կառուցված պարիսպը ենթակա է քանդման: (http://www.givemeinfo.am/hy/case/2441/?fbclid=IwAR1WyKxonbp2SDP2ulwlnrtHYh1FToPsMzCMiXTMwW3eFCFtCso5lxNmr8k): Համայնքի ղեկավարը տեղեկացրել էր նաև, որ քանդման աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել եղանակային պայմանների բարելավումից հետո:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում է տեղեկացնել, թե որ փուլում է պարսպի քանդման հարցը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան